Հաստատված է 02.10.2025թ.
____________Տ.Մելքոնյան

# ՀՀ ԿԳՄՍՆ «ԵՐԵՎԱՆԻ Ս.ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

## 2025-2026 ՈՒՍՏԱՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Հավանության է արժանացել ինֆորմատիկայի և մաթեմատիկայի մեթոդական միավորման 10.09.2025թ-ի N3 նիստում

**Նախագծի ղեկավար՝ Դարգիյան Վիոլետա**

| | |
|---|---|
| **Թեմա** | Տեղեկատվական տեխնոլոգիաները և հասարակությունը |
| **Ուսումնական նախագծի անվանումը** | Հեռավար աշխատանք և կրթություն |
| **Առարկա** | ԹԳՀԳ |
| **Ուսումնական տարի, կիսամյակ** | 2025-2026 ուս տարի, առաջին կիսամյակ |
| **Դասարաններ** | X դասարանի տնտեսագիտական 2 նպատակային խումբ |
| **Տևողություն՝ սկիզբ և վերջնաժամկետ** | 7շաբաթ (հոկտեմբերի 3-ից -նոյեմբերի 21) |
| **ՏՏ գործիքներ** | Համակարգիչ, գունավոր տպիչ, համացանց, PPT |
| **Նախագծի իրականացման փուլեր** | 1-ին փուլ - Նախապատրաստական աշխատանքներ / Հիմնահարց: <br> 2-րդ փուլ - Պլանավորում / նախագծում, տեղեկատվության հավաքում և վերլուծություն: <br> 3-րդ փուլ - Աշխատանքի բաժանում, փորձագիտական տվյալների որոնում և հավաքում: <br> 4-րդ փուլ - Նյութերի մշակում, տեսակավորում: <br> 5-րդ փուլ - Google Classroom-ի օգտագործման օժանդակ ձեռնարկի և QR-ների ստեղծում, շնորհանդես (նախնական): <br> 6-րդ փուլ - Մեդիանյութերի ստեղծում: <br> 7-րդ փուլ - Վերջնական արդյունքների համակարգում, շնորհանդես (վերջնական): |
| **Նախագծի տեսակը** | Ներառարկայական |
| **Նախագծի նպատակը** | 1. Ծանոթանալ : <br> 2. Նպաստել սովորողների ակտիվ |

| | |
|---|---|
| | գործունեության խթանմանը:<br>3. Ձևավորել հետաքրքրությունների հստակ շրջանակ:<br>4. Սովորողները կարողանան կիրառել ունեցած գիտելիքները, ինչպես նաև ստանան նոր գիտելիքներ:<br>5. Բացահայտել սովորողների անհատական առանձնահատկությունները և խթանել նրանց ստեղծարարական-հետազոտական կարողունակությունները:<br>6. Զարգացնել սովորողների վերլուծական հմտությունները:<br>7. Ուսումնասիրել հեռավար աշխատանքի և կրթության արդյունավետությունը, առավելություններն ու խնդիրները:<br>8. Բազմակողմանիորեն ուսումնասիրել հեռավար աշխատանքի և կրթության ազդեցությունը ժամանակակից կրթական համակարգի վրա՝ բացահայտելով այն սոցիալական, տեխնոլոգիական և մեթոդական գործոնները, որոնք ձևավորում են հեռավար ուսուցման արդյունավետությունը:<br>9. Միտված է ճանաչելու ուսուցիչների և սովորողների իրական փորձը, անհրաժեշտությունները և դժվարությունները:<br>10. Մշակել գործնական կիրառելի նյութեր՝ ստեղծելով Google Classroom հարթակի օգտագործման օժանդակ |

| | |
|---|---|
| | ձեռնարկ և հարցազրուցային վիդեո (փոդքաստ), որոնք կնպաստեն հեռավար ուսուցման որակի բարելավմանը, ուսումնական գործընթացի կազմակերպմանը, կօգնեն ուսուցիչներին ու սովորողներին ավելի հեշտ կողմնորոշվել և կազմակերպել ուսումնական գործընթացը Google Classroom հարթակում և թվային հմտությունների զարգացմանը: |
| **Նախագծի վերջնարդյունքը** | 1. Վերլուծել հեռավար աշխատանքի և կրթության էությունը, դրանց դերը ժամանակակից աշխարհում:<br>2. Ուսումնասիրել հեռավար կրթության առավելություններն ու դժվարությունները՝ թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների տեսանկյունից:<br>3. Բացահայտել Google Classroom հարթակի հնարավորություններն ու գործառույթները՝ որպես հեռավար կրթության գործիք:<br>4. Ստեղծել Google Classroom-ի օգտագործման օժանդակ ձեռնարկ, որտեղ քայլ առ քայլ կներկայացվեն հիմնական ֆունկցիաները:<br>5. Կազմակերպել հարցազրույց ուսուցիչների հետ, պարզելու համար՝ ինչպես են նրանք գնահատում հեռավար կրթությունը և ինչ խնդիրների են հանդիպել:<br>6. Վերլուծել հարցազրույցի արդյունքները, բացահայտել ընդհանուր կարծիքներն ու |

| | |
|---|---|
| | առաջարկությունները:<br>7. Ցուցադրել, թե ինչպես կարող են նոր տեխնոլոգիաները բարելավել ուսումնական գործընթացը, և ինչ փոփոխություններ կարող են բերել ապագայում: |
| **Հնարավոր հետագա ազդեցությունը, վերջնարդյունքի կիրառելիությունը այլոց կողմից** | ✓ **Հնարավոր հետագա ազդեցությունը դպրոցում.**<br>**1. Դպրոցի թվային կարողությունների զարգացում:**<br>Նախագիծը կօգնի դպրոցին ավելի կազմակերպված ձևով ներդնել և օգտագործել հեռավար կրթության հարթակները, ինչպիսին է Google Classroom-ը:<br>**2. Ուսուցիչների մասնագիտական աճ:**<br>Google Classroom-ի օգտագործման օժանդակ ձեռնարկն ու հարցազրույցների ընթացքում բացահայտված խնդիրները կարող են օգտակար լինել ուսուցիչների վերապատրաստման համար՝ բարձրացնելով նրանց թվային գրագիտությունը և գործնական հմտությունները:<br>**3. Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում:**<br>Վերլուծության արդյունքները կարող են դպրոցին օգնել ավելի ճիշտ կազմակերպել առցանց և հիբրիդ ուսուցումը՝ դարձնելով այն ավելի հասանելի, հստակ և համակարգված:<br>**4. Դպրոց-աշակերտ-ծնող կապի ամրապնդում:**<br>Թվային հարթակների նպատակային կիրառումը զգալիորեն բարելավում է դպրոց-ծնող հաղորդակցությունը. ծնողներն առավել հեշտությամբ |

| | |
|---|---|
| | հեշտացնել առցանց հարթակների օգտագործումը:<br>Տեղեկատվությունը կօգնի ծնողներին ավելի լավ կողմնորոշվել երեխաների ուսուցման գործընթացում:<br>**4.Այլ դպրոցներ:**<br>Նախագիծը կարող է ծառայել որպես օրինակելի մոդել, որը կարելի է կիրառել տարբեր կրթական հաստատությունների կողմից՝ իրենց հեռավար կրթության որակը բարձրացնելու նպատակով: |
| **Նախագծի նկարագիրը (ժամանակացույցը)** | **1-ին փուլ. Նախապատրաստական աշխատանքներ/**<br>**Հիմնահարց (հոկտեմբեր 3).**<br>**Ուսուցչի գործունեություն.**<br>• Ներկայացնում է նախագծի թեման, նպատակը և ակնկալվող վերջնական արդյունքը:<br>• Ստեղծում է խմբեր, բաժանում է դերերը և բացատրում աշխատանքի ընթացքը:<br>• Ներկայացնում է հիմնական հասկացությունները՝ «հեռավար կրթություն», «հեռավար աշխատանք», |

«թվային հարթակ», «առցանց գործիքներ»:

**Սովորողների գործունեություն.**

- Ձևավորում են խմբեր, ստանձնում են իրենց դերերը (հետազոտող, վերլուծող, դիզայներ, մոնտաժող, հաղորդավար և այլն):
- Ուսումնասիրում են թեմայի նախնական տեղեկությունները:
- Նախապատրաստում են հետագա ուսումնասիրությունների ուղղությունները:

**2-րդ փուլ. Պլանավորում, նախագծում, տեղեկատվության հավաքում և վերլուծություն (հոկտեմբեր 10).**

**Ուսուցչի գործունեություն.**

- Առաջարկում է ուսումնասիրել տարբեր առցանց կրթական գործիքներ:
- Ներկայացնում է, թե ինչ է հեռավար աշխատանքը, դժվարություններն ու խնդիրները:
- Ուղղորդում է, թե որտեղից և ինչպես կարելի է գտնել հուսալի աղբյուրներ:
- Հետևում է, որ սովորողները կարողանան ճիշտ համեմատել գործիքների առավելություններն ու թերությունները:

**Սովորողների գործունեություն.**

- Ուսումնասիրում են առցանց հարթակները՝ Zoom, Google Meet, Moodle, MS Teams,

Google Classroom և այլն:

- Կատարում են համեմատական վերլուծություն:
- Ներկայացնում են հեռավար աշխատանքի արդյունավետությունը, առավելություններն ու թերությունները:
- Ընտրում են Google Classroom-ը՝ որպես նախագծի հիմնական հարթակ:
- Նշումներ են անում և նախնական տվյալներ հավաքում:

**3-րդ փուլ. Աշխատանքի բաժանում, փորձագիտական տվյալների** որոնում և **հավաքում (հոկտեմբեր 17).**

**Ուսուցչի գործունեություն.**

- Օգնում է սովորողներին կազմել հարցազրույցի համար հարցեր:
- Կատարում է աշխատանքի բաժանում:
- Կազմակերպում է ուսուցիչների հետ հանդիպման հնարավորությունները:
- Վերահսկում է հարցազրույցների ընթացքը և ապահովում է դրանց արդյունավետ կազմակերպումը:

**Սովորողների գործունեություն.**

- Պատրաստում են հարցաշար ուսուցիչների համար:
- Խմբերով անցկացնում են հարցազրույցներ և գրանցում պատասխանները (ձայնագրում/գրառում):
- Վերլուծում են ստացված տեղեկությունները:

- Իրականացնում են տվյալների որոնում և հավաքում:

**4-րդ փուլ. Ուսումնական նյութի՝ Google Classroom-ի օգտագործման օժանդակ ձեռնարկի և QR-ների ստեղծում,** շնորհանդես **(նախնական), (հոկտեմբեր 31).**

**Ուսուցչի գործունեություն.**

- Ուղղորդում է Google Classroom-ի օգտագործման օժանդակ ձեռնարկի ստեղծում:
- Օգնում է ճիշտ կազմակերպել տեղեկատվությունը:
- Ներկայացնում է QR-ների պատրաստման տեխնիկական քայլերը:
- Ներկայացնում է նյութերի հերթականությունը սահիկաշարում:

**Սովորողների գործունեություն.**

- Ստեղծում են Google Classroom-ի օժանդակ ձեռնարկ (քայլ առ քայլ նկարագրում և տեղադրում են պատկերները):
- Ստեղծում են QR-ներ, որոնք կապ ունեն օժանդակ ձեռնարկի հետ:
- Պատրաստում են նախնական սահիկաշար:

**5-րդ փուլ. Մեդիանյութերի ստեղծում (նոյեմբեր 7).**

**Ուսուցչի գործունեություն.**

- Ուղղորդում է փոդքասթի թեման ու կառուցվածքը:
- Կազմակերպում է ձայնագրման պայմանները, հետևում է ընթացքին:

- Հետևում է, որ QR-ները ճիշտ ձևով տպվեն ու տեղադրվեն դպրոցում:

**Սովորողների գործունեություն.**

- Նկարահանում և ձայնագրում են փոդքասթ՝ ուսուցիչների մասնակցությամբ:
- Մշակում են ձայնագրությունը:
- Տպում և տեղադրում են QR-ները դպրոցում՝ տեսանելի վայրերում:

**6-րդ փուլ. Վերջնական արդյունքների համակարգում (նոյեմբեր 14).**

**Ուսուցչի գործունեություն.**

- Օգնում է հավաքել բոլոր նյութերը մեկ միասնական փաթեթի մեջ:
- Ուղղորդում է սահիկաշարի ներկայացման կառուցումը:
- Ապահովում է ներկայացման հարթակը (դասասենյակ, կամ դպրոցի դահլիճ):

**Սովորողների գործունեություն.**

Հավաքում են բոլոր պատրաստված նյութերը՝

✓ ձեռնարկ (էլեկտրոնային)
✓ հարցազրույցների վերլուծություն
✓ QR-ներ
✓ փոդքասթ
✓ պատրաստում են վերջնական ներկայացումը (Canva)
✓ կազմակերպում են ներկայացման ընթացքը:

| | |
|---|---|
| | **7-րդ փուլ . Նախագծի ներկայացում (նոյեմբեր 21).**<br>**Ուսուցչի գործունեություն.**<br>• Վերահսկում է ներկայացման ընթացքը:<br>• Տրամադրում է պատասխանատու և կառուցողական հետադարձ կապ:<br>• Գնահատում է նախագծի արդյունքն ու սովորողների ներգրավվածությունը:<br><br>**Սովորողների գործունեություն.**<br>• Ներկայացնում են նախագիծը՝ օժանդակ ձեռնարկ (էլեկտրոնային), QR-ներ, փոդքասթ:<br>• Պատասխանում են հարցերին՝ հիմնվելով իրենց կատարած ուսումնասիրությունների վրա:<br>• Ամփոփում են՝ ինչ սովորեցին,ինչ հմտություններ զարգացան, և ինչ կարելի է բարելավել:<br><br>**8-րդ Շնորհանդես (հանրային ներկայացում),(դեկտեմբերի 10).**<br>**Ուսուցչի գործունեությունը՝**<br>լսել, հարցեր տալ սովորողներին, ուղղորդել ,գնահատել նրանց կատարած աշխատանքի որակը:<br><br>**Սովորողի գործունեությունը՝**<br>ներկայացնել ուսումնական նախագիծը հանրությանը, մասնակցել հանձնաժողովի քննարկմանը: |
| **Կարողունակութ** | • **Վերլուծական մտածողություն:** |

| | |
|---|---|
| **յուններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում** | Տեղեկությունների հավաքման, դրանց վերլուծության, համեմատման և հիմնավորված հետևությունների ձևակերպման կարողություն:<br>• **Հետազոտական հմտություններ:**<br>Հարցազրույցների կազմակերպում, տվյալների մշակում և գնահատում:<br>• **Թվային գրագիտություն:**<br>Google Classroom-ի, առցանց գործիքների և թվային հարթակների օգտագործում:<br>• **Կոմունիկացիոն հմտություններ:**<br>Ուսուցիչների հետ հարցազրույցներ վարելը, կարծիքների ներկայացումը:<br>• **Թիմային աշխատանք:**<br>Համագործակցություն, պարտականությունների բաշխում և միասնական արդյունքի ձևավորում:<br>• **Գրավոր և բանավոր արտահայտման հմտություններ:**<br>Հանգամանալի տեքստերի, վերլուծական նյութերի և տրամաբանական եզրակացությունների ձևակերպման կարողություն:<br>• **Խնդիրների լուծման կարողություն:**<br>Հայտնաբերված դժվարությունների վերլուծում և հնարավոր լուծումների առաջարկում:<br>• **Նախագծային մտածողություն:**<br>Աշխատանքի պլանավորում, փուլերի կազմակերպում և արդյունքում ստացված նյութերի ներկայացում: |
| **ՈՒսումնական նախագծի հիմնախնդիրը և մարտահրավերային հարցեր** | Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման ու համավարակի ազդեցությամբ հեռավար աշխատանքն |

ու կրթությունը դարձել են ոչ միայն անհրաժեշտություն, այլ նաև լայն տարածում ունեցող մեթոդներ:Սակայն հեռավար կրթության արդյունավետությունը դեռևս ամբողջովին չի ուսումնասիրվել ,իսկ ուսուցիչներն ու աշակերտները հաճախ հանդիպում են տեխնիկական, կազմակերպչական և սոցիալական խնդիրների: Այս նախագիծը նպատակ ունի ուսումնասիրել հեռավար աշխատանքի և կրթության էությունը, դրա առավելություններն ու թերությունները, դժվարությունները, ինչպես նաև գնահատել թվային գործիքների՝ հատկապես Google Classroom-ի , կիրառելիությունը և ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

**Մարտահրավերային հարցեր:**

1. Ինչպե՞ս է հեռավար կրթությունը փոխել ուսուցիչների և աշակերտների սովորելու ու դասավանդելու մեթոդները:
2. Որո՞նք են հիմնական դժվարությունները, որոնց հանդիպում են ուսուցիչներն ու աշակերտները հեռավար կրթության ընթացքում:
3. Ինչպե՞ս կարող են թվային հարթակները, հատկապես Google Classroom-ը , բարելավել ուսումնական գործընթացը:
4. Ինչպիսի՞ն է աշակերտների մոտիվացիան և մասնակցությունը հեռավար դասերին և ինչպե՞ս այն

| | |
|---|---|
| | կարելի է բարձրացնել:<br>5. Ինչպիսի՞ն կարող է լինել հեռավար կրթության երկարաժամկետ ազդեցությունը դպրոցի կրթական գործընթացի վրա:<br>6. Ինչպիսի՞ն են առաջարկությունները հեռավար կրթությունը արդյունավետ կազմակերպելու համար՝ հիմնվելով իրական փորձի և վերլուծության վրա: |
| **Խմբին տրվող առաջադրանքներ** | **1. Հեռավար աշխատանքի և կրթության ուսումնասիրություն:**<br>✓ Վերլուծել հեռավար աշխատանքի և կրթության էությունը և դրանց դերը ժամանակակից աշխարհում:<br>✓ Հիմնական առավելություններն ու մարտահրավերները. (դիտարկել ուսուցիչների և աշակերտների տեսանկյունից):<br>**2. Առցանց կրթական գործիքների ուսումնասիրություն:**<br>✓ Ուսումնասիրել տարբեր առցանց կրթական հարթակներ և գործիքներ:<br>✓ Ընտրել դրանցից Google Classroom-ը, որպես նախագծում կիրառվող հիմնական հարթակ:<br>✓ Ներկայացնել առցանց կրթական հարթակների առավելություններն ու թերությունները:<br>**3. Օժանդակ ձեռնարկի ինտերակտիվ նյութերի պատրաստում:**<br>✓ Ստեղծել Google Google Classroom-ի օգտագործման քայլ առ քայլ |

<table>
<tr>
<td></td>
<td>օժանդակ ձեռնարկ՝ պատկերներով և բացատրություններով:<br>✓ QR-ներ ստեղծել, որոնք կապ են ապահովում ստեղծած ձեռնարկի հետ, և տեղադրել դրանք դպրոցի տարբեր վայրերում՝ ուսուցիչների և աշակերտների համար մատչելի և հեշտ հասանելի դարձնելու նպատակով:<br>4. Հետազոտական աշխատանք:<br>✓ Կազմակերպել հարցազրույց ուսուցիչների մասնակցությամբ՝ պարզելու նրանց փորձը և գնահատականները հեռավար կրթության վերաբերյալ:<br>✓ Վերլուծել հարցազրույցների արդյունքները, բացահայտել ընդհանուր կարծիքներն ու առաջարկությունները:<br>5. Արդյունքների ներկայացում:<br>✓ Ներկայացնել հեռավար կրթության ազդեցությունը և խնդիրները:<br>✓ Նկարագրել, թե ինչպես նոր տեխնոլոգիաները կարող են բարելավել ուսումնական գործընթացը ապագայում:</td>
</tr>
<tr>
<td>Միջառարկայական կապեր</td>
<td>1. Հասարակագիտություն:<br>Ուսումնասիրվում է դասարանային հարաբերությունների և ուսումնական գործընթացում հաղորդակցության ազդեցությունը, ուսուցիչների և աշակերտների դերը հեռավար կրթության համակարգում:<br>2. Լեզու և գրականություն:</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| | Եզրակացությունների, ձեռնարկի և հարցազրույցների վերլուծական տեքստերի պատրաստում, տեղեկատվության գրագետ և տրամաբանական ներկայացում:<br>**3. Արվեստ:**<br>QR-ների և վիզուալ նյութերի դիզայն՝ ուսումնական նյութերի գրավիչ և արդյունավետ ներկայացման համար: |
| **Ուսումնական նախագծի ավարտուն արդյունքի (պրոդուկտի) ներկայացման տեսակը** | **1.Գրավոր ուղեցույց:**<br>Google Classroom-ի օգտագործման քայլ առ քայլ օժանդակ ձեռնարկ՝ պատկերներով և բացատրություններով, որը պատրաստված է ուսուցիչների և աշակերտների համար:<br>**2.QR-ներ:**<br>QR-ներ, որոնք կապ են ապահովում ձեռնարկի և այլ վիզուալ /դասավանդման նյութերի հետ, տեղադրված դպրոցի պատերին՝ հեշտ հասանելիության համար:<br>**3. Փոդքասթ ուսուցիչների մասնակցությամբ:**<br>Փոդքասթը կազմակերպվել է դպրոցում՝ ուսուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում ներկայացվել են հեռավար կրթության արդյունավետության և Google Classroom-ի կիրառման փորձերը, տրվել են հարցեր ,քննարկվել են խնդիրներն ու լուծումները:<br>**5.Ներկայացում կամ սահիկաշար:**<br>Canva սլայդ ներկայացում, որտեղ համառոտ ներկայացված են նախագծի |

| | |
|---|---|
| | արդիականությունը, նպատակը, խնդիրները, արդյունքները, վերլուծությունները և եզրակացությունները: |
| **Ուսումնական նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ** | սահիկաշար, էլեկտրոնային ձեռնարկ, QR, փոդքասթ |
| **Հետազոտության աղբյուրներ** | համացանց, տեխնոլոգիական հոդվածներ, էլեկտրոնային գրքեր, հեռավար կրթության և աշխատանքի գործնական հարթակներ |

| **Խմբի գործողությունները** | | | | |
|---|---|---|---|---|
| **1-ին խումբ** | **Խմբի անդամները** | **Անելիքները** | **Նախատեսված ժամկետները** | **Կատարման ժամկետը** |
| 1 | Գևորգյան Լիանա | Ուսումնասիրել հեռավար կրթության զարգացումը Հայաստանում, ներկայացնել Google Classroom-ի կառուցվածքը, գործնական մասի կատարում, Google Classroom-ի վերաբերյալ օժանդակ ձեռնարկի պատրաստում՝ պարզ բացատրություններով և նկարներով, ներկայացնել Google Classroom-ում գրանցվելու, մուտք գործելու, առաջադրանքներ ստեղծելու և հանձնարարելու քայլերի հերթականությունը, պատրաստել ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը, QR-ի ստեղծում, սահիկաշարի պատրաստում (Canva), փոդքասթի նկարահանում և մոնտաժում (Capcut), պատրաստած QR-ները փակցնել դպրոցի պատերին: | Հոկտեմբեր 6 | Նոյեմբեր 19 |
| 2 | Բեգլարյան Հեղինե | Կատարել Learning Apps հարթակի ուսումնասիրություն, ներկայացնել Google Classroom-ի կառուցվածքն ու առավելությունները, Google Classroom հարթակին միանալու քայլերը, | Հոկտեմբեր 6 | Նոյեմբեր 19 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ուսանողների համար առավելությունները Google Classroom-ից օգտվելիս, փոդքասթի նկարահանում, պատրաստած QR-ները փակցնել դպրոցի պատերին: | | |
| 3 | Գևորգյան Իվետա | Ներկայացնել թեմայի խնդիրները, ուսումնասիրել Padlet, Moodle, Google Classroom հարթակները, դրանց հիմնական հնարավորությունները, | Հոկտեմբեր 6 | Նոյեմբեր 19 |
| 4 | Գալստյան Զավեն | ուսուցիչների համար առավելությունները Google Classroom-ից օգտվելիս, գործնական մասի կատարում՝ Google Classroom օժանդակ ձեռնարկի ստեղծում, շարքի ձևավորում, փոդքասթի նկարահանում, QR-ը դարձնել թղթային տարբերակով և փակցնել դպրոցի պատերին: | Հոկտեմբեր 6 | Նոյեմբեր 19 |
| 5 | Օհանյան Արեգ | Ներկայացնել թեմայի արդիականությունը (ինչու է հիմա կարևոր խոսել հեռավար կրթության և աշխատանքի մասին), ինչ է հեռավար աշխատանքը, պատրաստած QR-ները փակցնել դպրոցի պատերին: | Հոկտեմբեր 6 | Նոյեմբեր 19 |
| 6 | Ասլանյան Դավիթ | Ներկայացնել օգտագործվող կրթական տեխնոլոգիաները և առցանց հարթակները, դրանց կիրառությունը, փոդքասթի նկարահանում՝ որպես հաղորդավար, պատրաստած QR-ները փակցնել դպրոցի պատերին: | Հոկտեմբեր 6 | Նոյեմբեր 19 |
| 7 | Միքայելյան Հարություն | Ներկայացնել հեռավար աշխատանքի առավելություններն ու թերությունները, խնդիրներն ու դժվարությունները, կատարել հեռավար կրթության ուսումնասիրություն, փոդքասթի նկարահանում՝ որպես հաղորդավար, պատրաստած QR-ները փակցնել դպրոցի պատերին: | Հոկտեմբեր 6 | Նոյեմբեր 19 |